# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» հոկտեմբերի 2018 թվականի N: 226 ք.Գյումրի

## ՎԱՆԻԿ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՕՐԵՐԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1101-Ն որոշմամբ 2018 թվականի հոկտեմբերի 11-ի և 12-ի աշխատանքային օրերը համարվել են ոչ աշխատանքային և այդ օրերին Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Սերոբյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 191 կարգադրությամբ գործուղվել է քաղաք Երևան՝ Ֆրանկոֆոնիայի ավանի Հայաստանի տաղավարում որպես Շիրակի մարզի ներկայացուցիչ հանդես գալու նպատակով, հիմք ընդունելով Վանիկ Սերոբյանի 2018 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի հոկտեմբերի 11-ի և 12-ի հանգստյան օրերին Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Սերոբյանին համարել աշխատանքի մեջ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վարձատրություն՝ ժամային (օրական) դրույքաչափի կրկնակի չափով:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է